“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը անվտանգության և որակի բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Էներգաբլոկների բազմամյա շահագործումն ապացուցել է Հայկական ԱԷԿ-ի աշխատանքի հուսալիությունն ու անվտանգությունը:
Սակայն բնակչության, կարգավորող մարմինների և միջազգային հանրության կողմից շահագործման անվտանգությանը ներկայացվող պահանջների մշտական աճը, ինչպես նաև կուտակված փորձի և իրավիճակի վերլուծությունը մեզանից պահանջում են վերանայել մեր մոտեցումները և պատշաճ միջոցներ ձեռք առնել՝ էլեկտրաէներգիայի արտադրման համար միջուկային էներգաբլոկների շահագործման ընթացքում անվտանգության, հուսալիության և որակի բոլոր տեսակների առավել բարձր մակարդակի հասնելու համար:
“ՀԱԷԿ” ՓԲԸ-ի վարչական և տեխնիկական ղեկավարությունը հստակ գիտակցում է, որ ամբողջությամբ և պաշտոնապես պատասխանատվություն է կրում շահագործվող էներգաբլոկների անվտանգության համար (առաջին հերթին միջուկային) և հայտարարում է անվտանգության համար կարևոր գործունեության բոլոր տեսակների լավագույն ցուցանիշների հասնելու իր ձգտման մասին:
Դեռ ավելին, “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի վարչական և տեխնիկական ղեկավարությունն ընդունում է, որ “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի պատասխանատվությունը ոչ մի կերպ չի նվազում կառավարման և կարգավորման համար պատասխանատու պետական կազմակերպությունների, ՀԱԷԿ-ի համար սարքավորումների նախագծում, պատրաստում և մատակարարում իրականացնող կողմակի ձեռնարկությունների, ինչպես նաև ինժեներատեխնիկական այլ ձեռնարկությունների ինքնուրույն գործունեության պարագայում:
Մենք պաշտոնապես հայտարարում ենք, որ մեր գործունեության առավել բարձր առաջնահերթությունը, որը գերազանցում է անգամ արտադրության գործոնը, հանդիսանում է ՀԱԷԿ-ի և անձնակազմի անվտանգությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելը:
Անվտանգության և որակի բնագավառում մեր քաղաքականությունն իրականացնելիս՝ մենք ղեկավարվում ենք հետևյալ սկզբունքներով.
- նվիրվածություն «անվտանգության կուլտուրա» գաղափարին և այնպիսի արտադրական մթնոլորտի պահպանում, երբ հիմական տարրը անձնակազմի՝ անվտանգությանը միտված մտածողությունն է, որը ձևավորում է քննադատական դիրքորոշում, բացառում է բարեհոգությունը և նախատեսում է ձգտում դեպի կատարյալը, անվտանգության հարցերում անձնական պատասխանատվության և գործին նվիրված լինելու զգացումի զարգացում,
- որակի ապահովում անվտանգության և արդյունավետ շահագործման վրա ազդող գործունեության բոլոր տեսակների իրականացման ընթացքում,
- բոլոր առաջադրանքների և աշխատանքների անշեղ և անսխալ կատարման ապահովում վարչակազմակերպական կառուցվածքի, հիերարխիկ ենթակայությամբ հաշվետվության միջոցով՝ պարտականությունների ու պատասխանատվությունների հստակ բաշխմամբ,
- հարցերի բաց քննարկում և անպատժելիության քաղաքականության կիրառում պատահական սխալների մասին հաղորդելու դեպքում,

- սիստեմատիկ պլանավորում և առաջնահերթությունների որոշում գործունեություն իրականացնելու ընթացքում, ինչպես նաև գործունեության արդյունքների որակի վերահսկում:

Անվտանգության և որակի բնագավառում կիրառվող քաղաքականությունը ԱԷԿ(Շ)ՈԱԾ-ի (ПОКАС(Э)) անբաժանելի մասն է կազմում. ԱԷԿ(Շ)ՈԱԾ-ը հիմք է հանդիսանում “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարության՝ շահագործման անվտանգության , հուսալիության և որակի բարձրացմանն ուղղված ռազմավարության ձևավորման համար:

Որակի ապահովման տվյալ ծրագրի դրույթների ճշտությամբ կատարելը և որակի կառավարման համակարգի հստակ գործելը շահագործման մշտական կատարելագործման և անվտանգության բարձրացման հետ մեկտեղ հանդիսանում են մեր առջև ծառացած խնդիրների իրագործման միակ և ճիշտ ճանապարհը:

Յուրաքանչյուր աշխատող և ղեկավար, զգալով իր պատասխանատվությունը անվտանգության ապահովման, կատարվող աշխատանքի տեխնիկական մակարդակի և որակի համար, պետք է իր գործունեությունն իրականացնի համաձայն տվյալ փաստաթղթում սահմանված սկզբունքների և հավատարիմ մնա դրանց: